Արձանագրություն N 4

«ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-19/2» «Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, փորձաքննությամբ» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

09 ապրիլ 2019

ժամը 10:00

Մասնակցում էին՝

նախագահ՝ Արտաշես Նազարեթյան

անդամներ՝ Էդուարդ Զաքարյան

Սմբատ Այդինյան

Սամվել Սամվելյան

Անահիտ Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ռոզա Մեհրաբյան

1. Ընթացակարգի հայտի գնահատման մասին

(Ա.Նազարեթյան)

Ընդունել ի գիտություն, որ.

Հիմք ընդունելով, I տեղը զբաղեցրած մասնակցի Գլոբալ Ինժեներ ՍՊԸ-ի մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 08.04.2019թ.-ի եզրակացությունը՝ և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, (գնահատման թերթիկները կցվում են) հանձնաժողովը որոշեց՝

- I տեղը զբաղեցրած մասնակցին՝ Գլոբալ Ինժեներ ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, վերջինիս ճանաչել որպես ընտրված մասնակից՝ 1-ին չափաբաժնի համար:

- Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ		Արտաշես Նազարեթյան
Անդամներ		Էդուարդ Զաքարյան
		Սմբատ Այդինյան
		Սամվել Սամվելյան
		Անահիտ Կարապետյան
Քարտուղար		Ռոզա Մեհրաբյան